ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

N 372

«28» օգոստոս 2024թ.

Ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, էլ. Փոստ՝ info@gorismc.am
☏ (0284) 2-21-52

**<Ագաստ> ՍՊԸ-ի**
**տնօրեն Գ.Մուրադյանին**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <Ագաստ> ՍՊԸ-ի միջև 02.02.2024թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3/1> ծածկագրով <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ ասեղ ֆիստուլային 16G երակային և ասեղ ֆիստուլային 16G զարկերակային (այսուհետ՝ ապրանքներ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքները և վճարել դրա համար, սակայն ապրանքները մինչ օրս չի մատակարարվել:

22.08.2024թ. թիվ 363 գրությամբ պայմանագրի 2.1.5 կետի համաձայն ծանուցվել է և տրվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ և զգուշացվել չմատակարարվելու դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծվի, սակայն մինչ օրս ոչ մի ապրանք չի մատակարարվել և որևէ պատասխան չի ստացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի <բ> ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 4-րդ և 17-րդ ենթակետերը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ –ն ամբողջությամբ լուծում է <Ագաստ> ՍՊԸ-ի միջև 02.02.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3/1> ծածկագրով պայմանագիրը՝ 7,8 չափաբաժինների մասով:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները նշված չափաբաժինների մասով, ապա <Ագաստ> ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

**ՏՆՕՐԵՆ՝** **Դ.ՄԱՇՈՒՐՅԱՆ**